«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ (ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ N _____-Ա

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ
ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ (ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ

ՄԵՂՄԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 81-րդ հոդվածը՝ Հայաստանի
Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության
օրենքով «Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում» ծրագրի «Խմելու ջրի մատակարարման և
ջրահեռացման ծառայությունների սուբսիդավորում» միջոցառմամբ նախատեսված գումարից տրամադրել «Վեոլիա
Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ 2024 թվականի հունվարի 1-ից մինչև նոյեմբերի 30-ը ներառյալ
ընկած ժամանակահատվածում մատուցվող խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման)
մանրածախ ծառայությունների դիմաց՝ հետևյալ չափերով՝

1) բաժանորդներին խմելու ջրի մատակարարման ծառայության մատուցման յուրաքանչյուր խորանարդ մետր
մատակարարված խմելու ջրի դիմաց 175.093 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը) սակագնից՝ 4.693
դրամ սուբսիդիա (ներառյալ ավելացված արժեքի հարկը).

2) բաժանորդներին ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայության մատուցման յուրաքանչյուր
խորանարդ մետր հեռացված ջրի դիմաց 30.899 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը) սակագնից՝ 0.829

դրամ սուբսիդիա (ներառյալ ավելացված արժեքի հարկը):
2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության
ջրային կոմիտեի նախագահին՝
1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N1937-Ն որոշմամբ
սահմանված կարգի համաձայն «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել սուբսիդիայի
տրամադրման պայմանագիր.
2) սուբսիդիայի տրամադրումն իրականացնել 2024 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը
ներառյալ ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև 30-ը՝ «Վեոլիա
Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից մինչև հաջորդող ամսվա 15-ը ներկայացրած մանրածախ
ջրամատակարարման և ջրահեռացման ծավալի և նույն ժամանակահատվածի ձևավորված հասույթի վերաբերյալ
տեղեկանքի հիման վրա։

3. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նշված սուբսիդիայի չափերը կիրառելի
են նաև 2024 թվականի դեկտեմբեր ամսվա համար խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի
մաքրման) մանրածախ ծառայությունների դիմաց։
4. Առաջարկել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ 2024 թվականի հունվարի 1-ից մինչև
դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման
(կեղտաջրերի մաքրման) մանրածախ ծառայությունների դիմաց բաժանորդներից (բացառությամբ Հայաստանի
Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի N 1122-Ն որոշման համաձայն սոցիալապես
անապահով ընտանիք համարվող սպառողների (բաժանորդների)) վճարումները գանձել Հայաստանի
Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված սակագներից
նվազեցված սակագներով՝ հետևյալ չափերով՝
1) խմելու ջրի մատակարարման ծառայության մատուցման սակագինը 170.4 դրամ՝ յուրաքանչյուր խորանարդ
մետր մատակարարված խմելու ջրի դիմաց (ներառյալ ավելացված արժեքի հարկը).
2) ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայության մատուցման սակագինը 30.07 դրամ՝ յուրաքանչյուր
խորանարդ մետր հեռացված ջրի դիմաց (ներառյալ ավելացված արժեքի հարկը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, և դրա
գործողությունը տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան